



Հիմնական տնտեսական միտումները Հայաստանում

Փետրվար 2006

Ներկայացվում են 2006 թվականի փետրվարի դրությամբ առկա վերջին ամսական ցուցանիշները. ՀՆԱ-ի, համախառն թողարկման, պետական բյուջեի, արտաքին հատվածի վերջին թարմ ամսական տվյալները վերաբերում են հունվար-դեկտեմբեր ամիսներին, իսկ ֆինանսական, արտարժույթային և սպառողական շուկաների ցուցանիշները՝ հունվարին:

Ելենա Մանուկյան

Հրատարակվում է «Օքսֆամ» ՄԲ աջակցությամբ



Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ամփոփում

	2002	2003	2004	2005
տարեկան ցուցանիշներ				
Իրական հատված				
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	739.6	874.4	1,106.7	1,513.7
ՀՆԱ-ի իրական աճ (%)	13.2	14.0	10.1	13.9
Արդյունաբերության աճ (%)	13.9	15.6	2.1	7.4
Գյուղատնտեսության աճ (%)	3.8	4.2	14.5	11.2
Շինարարության աճ (%)	41.5	45.5	13.4	35.1
Տրանսպորտ և կապի աճ (%)	-1.7	8.2	16.9	13.2
Առևտուր և հանրային սննդի աճ (%)	19.7	14.1	10.5	9.6
Ծառայությունների աճ (%)	12.0	8.6	12.1	10.4
ՀՆԱ-ի դեֆլյատոր (%)	0.7	4.6	6.0	3.1
Սպառողական գների ինդեքս (ժ/շ միջին, %)	1.1	4.7	7.0	0.6
Հարկաբյուջետային հատված (պետական բյուջեի ցուցանիշներն ըստ ֆինանսավորման)				
Հարկային եկամուտներ (մլրդ դրամ)	185.4	212.2	250.1	304.3
Ծախսեր (մլրդ դրամ)	235.8	242.0	295.9	395.2
Դեֆիցիտ (մլրդ դրամ)	7.8	-8.1	-2.0	22.2
Հարկային եկամուտներ (ՀՆԱ-ի %)	13.6	13.1	13.2	13.7
Ծախսեր (ՀՆԱ-ի %)	17.3	14.9	15.6	17.7
Դեֆիցիտ (ՀՆԱ-ի %)	0.6	0.5	0.1	1.0
Արտաքին հատված				
Արտահանում (ՖՕԲ, մլն ԱՄՆ դոլար)	505.2	685.6	722.9	950.4
Ներմուծում (ՄԻՖ, մլն ԱՄՆ դոլար)	987.2	1,279.5	1,350.7	1,767.9
Առևտրային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար)	-482.0	-593.9	-627.8	-817.6
Արտահանման աճ (%)	47.8	35.7	5.4	31.5
Ներմուծման աճ (%)	12.5	29.6	5.6	30.9
Առևտրային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	20.3	21.2	17.7	16.8
Դրամավարկային հատված				
Փողի զանգված (ժ/շ վերջ, մլրդ դրամ)	203.1	233.8	285.9	365.6
ՀՀ ԿԲ Չուտ արտաքին ակտիվներ (մլրդ դրամ)	123.7	157.8	168.9	237.6
Փողի զանգվածի շրջապատույթի արագություն*	6.7	6.9	6.6	6.1
Փողի բազմարկիչ	2.0	2.1	2.2	1.9

* Հաշվարկվել է որպես անվանական ՀՆԱ-ի և փողի զանգվածի հարաբերություն:
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

Ֆինանսական, արտարժույթային և սպառողական շուկաներ

	2002	2003	2004	2005	Հունվար 2006
Պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերություն (%)					
9-12-ամսյա ՊԿՊ-ներ	15.6	9.7	-	-	4.9
Միջնաժամկետ մասնակի մարումներով	19.7	-	5.6	-	-
ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույք	19.0	18.0	16.0	16.0	16.0
Վարկերի տոկոսադրույքներ	18.8	20.9	18.2	17.3	16.9
Ավանդների տոկոսադրույքներ	4.2	6.4	4.4	6.5	6.4
Դրամ / ԱՄՆ դոլար միջին փոխարժեքի աճ (%)	3.3	0.9	-7.8	-14.2	0.5
Դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեք (ժ/շ վերջ)	584.9	566.0	485.8	450.2	449.2
Դրամ / ԵՎՐՈ փոխարժեք (ժ/շ վերջ)	606.9	702.2	661.1	532.4	542.7
Դրամ / ՌԴ ռուբլի փոխարժեք (ժ/շ վերջ)	18.3	19.2	17.5	15.6	16.0
Սպառողական գների ինդեքս (ժ/շ վերջ, %)	2.0	8.6	2.0	-0.2	3.6
Պարենային ապրանքներ*	1.9	12.4	2.8	-1.2	5.2
Ոչ պարենային ապրանքներ	2.7	0.4	0.0	2.1	0.0
Ծառայություններ	1.5	2.1	0.5	1.9	0.1

* Ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ:
Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

Հիմնական միտումները

Իրական հատված

2005 թվականի հունվար-դեկտեմբերին տնտեսական աճը կազմեց 13.9 տոկոս՝ տարեսկզբին ծրագրավորված 8.0 տոկոսից շեղվելով 5.9 տոկոսային կետով և նախորդ տարվա համեմատ արագանալով 3.8 տոկոսային կետով: Արդյունքում մեկ շնչին ընկնող ամսական միջին ՀՆԱ-ն նախորդ տարվա համեմատ ավելացավ 34 ԱՄՆ դոլարով և կազմեց 126 ԱՄՆ դոլար:

Տնտեսական աճին առավել նպաստեցին շինարարության, գյուղատնտեսության և ծառայությունների ճյուղերը, համապատասխանաբար, 5.4, 2.5 և 1.8 տոկոսային կետերով: 2004-ին նույն ճյուղերի մասնակցությունը տնտեսական աճին կազմել էր 2.1, 3.1 և 2.2 տոկոսային կետ համապատասխանաբար: Նկատելի փոփոխություններ տեղի ունեցան նաև ՀՆԱ-ի կառուցվածում, որոնցից առավել հիշարժան են շինարարության ճյուղի կշռի ավելացումը 6.1 տոկոսային կետով և գնուղատնտեսության ճյուղի նվազումը 3.8 տոկոսային կետով: Արդյունքում 2005 թվականին ՀՆԱ-ի 21.6 տոկոսը ձևավորվեց շինարարության ճյուղում ստեղծված ավելացված արժեքի հաշվին, իսկ գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերի ավանդը գրեթե հավասարվեց՝ կազմելով կառուցվածքի, համապատասխանաբար, 18.8 և 18.7 տոկոսը:

ՀՆԱ-ի հիմնական մասը՝ 59.4 տոկոսը ձևավորվեց ի հաշիվ ապրանքների արտադրության, ծառայությունները կազմեցին 32.1 տոկոսը, իսկ զուտ հարկերը՝ 8.5 տոկոսը:

Աճի առավել բարձր տեմպերով դարձյալ աչքի ընկավ շինարարության ճյուղը, որտեղ նախորդ տարվա համեմատ աճն արագացավ 21.7 տոկոսային կետով և կազմեց 35.1 տոկոս: Հիմնական ճյուղերի շարքում նվազագույն աճը՝ 7.4 տոկոս, արդյունաբերության ճյուղում էր:

Բյուջետային հատված

ՀՀ ՖԵՆ նախնական տվյալների համաձայն 2005 թվականին պետական բյուջեի եկամուտները մոտ քառորդով գերազանցեցին նախորդ տարվա մակարդակը՝ կազմելով երկրի համախառն ներքին արդյունքի 16.7 տոկոսը: Պետբյուջեի միջոցներից ֆինանսավորված ծախսերի աճը 8.4 տոկոսային կետով առաջանցիկ էր եկամուտների նկատմամբ: Արդյունքում ձևավորված 22.2 միլիարդ դրամի դեֆիցիտը կազմեց ՀՆԱ-ի 1 տոկոսը:

Բյուջեի եկամուտների աճը հիմնականում ԱՄՅ-ի՝ 24.5 տոկոսով, ոչ հարկային եկամուտների՝ 2.4 անգամ և շահութահարկի գծով մուտքերի՝ 45.4 տոկոսով աճերի արդյունք էր: Ակցիազային և պարզեցված հարկերից մուտքերի անկումը՝ 5 և 6 տոկոսով համապատասխանաբար, զսպեց եկամուտների աճը 0.8 տոկոսային կետով:

Հարկային եկամուտների 21.6 տոկոս աճը՝ 3.8 տոկոսային կետով գերազանցեց 2004-ի մակարդակը: Չնայած ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտները 0.5 տոկոսային կետով գերազանցեցին նախորդ տարվա ցուցանիշը, սակայն ապահովել ՀՆԱ-ի 14.0 տոկոս մակարդակն այդպես էլ չհաջողվեց:

Բյուջեի ծախսերը 33.5 տոկոսով գերազանցեցին նախորդ տարվա ցուցանիշը: 2004-ի համեմատ հատկացումների առավել մեծ աճ՝ 19.5 անգամ արձանագրվեց վառելիքաէներգետիկ համալիրին ուղղված միջոցների գծով, որի արդյունքում վերջինիս կշիռն ընդհանուր ծախսերի կառուցվածքում կազմեց 2.7 տոկոս՝ նախորդ տարվա 0.2 տոկոսի փոխարեն:

2005 թվականին կրթության և գիտության ծրագրերի ֆինանսավորումն ավելացավ 30.2 տոկոսով, առողջապահության և սոցիալական ծրագրերինը՝ 25.3 և 24.7 տոկոսներով համապատասխանաբար: Այնուամենայնիվ, ՀՆԱ-ի նկատմամբ արտահայտված՝ հատկացումների աճն առավել քան համեստ էր՝ 0.1-0.2 տոկոսային կետերի սահմաններում, իսկ բյուջեի ընդհանուր ծախսերի կառուցվածքում վերոհիշյալ ոլորտների կշիռներն ընդհանրապես նվազեցին:

Ծախսերի աճը մեծամասամբ պայմանավորվեց կապիտալ բնույթի ծախսերին, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների պետական գնումների ֆինանսավորմանն ուղղված միջոցների, համապատասխանաբար, 2.2 անգամ և 24 տոկոսով աճերով:

Արտաքին առևտուր

2005 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին արտահանման աճը 0.6 տոկոսային կետով առաջանցիկ էր ներմուծման աճից: Վերջինս անշուշտ բավարար չէր առևտրային հաշվեկշռի բարելավման նախադրյալների ստեղծման համար, և նախորդ տարվա համեմատ բացասական սալոնո խորացավ 30.2 տոկոսով: Միևնույն ժամանակ և՛ արտահանման, և՛ ներմուծման կշիռները ՀՆԱ-ի նկատմամբ կրճատվեցին, համապատասխանաբար, 0.8 և 1.7 տոկոսային կետերով: Ներմուծման կշիռը՝ արտահանման համեմատ առավել կրճատման արդյունքում 0.9 տոկոսային կետով կրճատվեց նաև առևտրային հաշվեկշիռը ՀՆԱ-ի նկատմամբ՝ կազմելով 16.8 տոկոս: Արդյունքում 2005 թվականին առևտրային հաշվեկշռի բացասական սալոնո (առանց մարդասիրական օգնության) կազմեց 777.2 միլիոն ԱՄՆ դոլար:

Դրամավարկային հատված

Ըստ ՀՀ ԿԲ նախնական տվյալների 2005 թվականի դեկտեմբերի վերջին փողի զանգվածը 2004-ի դեկտեմբերի նկատմամբ աճեց 79.6 միլիարդ դրամով, որից 45.7 միլիարդ դրամը կամ 57.5 տոկոսը ի հաշիվ բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի ավելացման: Նախորդ տարվա համեմատ ՀՀ դրամով ցայահանջ և ժամկետային ավանդների աննախադեպ բարձր աճերը՝ 70.6 և 70.9 տոկոսով համապատասխանաբար, ուղեկցվեցին արտարժույթով ավանդների աճի առավել քան համեստ տեմպերով՝ 0.4 տոկոս: Արդյունքում էապես բարելավվեց արտարժույթով և ՀՀ դրամով ներգրավված ավանդների հարաբերակցությունը: Եթե նախորդ տարի արտարժույթով ավարդները մոտ 3 անգամ գերակշռում էին դրամով ավանդների նկատմամբ, 2005-ին այդ ցուցանիշը կազմեց 1.7 միավոր:

Արտարժույթային փոխարժեքներ

2006 թվականի հունվարին ՀՀ դրամի միջին փոխարժեքն արժեվորվեց բոլոր հիմնական փոխարժեքների համեմատ, այդ թվում՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 8.1 տոկոսով կամ 40 դրամով, եվրոյի նկատմամբ՝ 15.3 տոկոսով կամ 99 դրամով, իսկ ռուսական ռուբլու նկատմամբ՝ 9.5 տոկոսով կամ 1.7 դրամով: Հունվարի ընթացքում ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուսական ռուբլու միջին փոխարժեքների առավելագույն մակարդակները կազմեցին՝ 455.9, 551.4 և 16.1 դրամ համապատասխանաբար: Ամսվա ընթացքում առավելագույն տատանումը՝ 19 դրամ եվրոյի փոխարժեքի գծով էր:

2006 թվականի հունվարի վերջին 2005-ի դեկտեմբերի վերջի համեմատ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեվորվեց 1 դրամով: Միևնույն ժամանակ այն արժեզրկվեց եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ՝ 10.4 և 0.3 դրամով համապատասխանաբար:

Սպառողական շուկա

2006 թվականի հունվարին սպառողական շուկայում տեղի ունեցավ 3.6 տոկոս գնաճ, որը հիմնականում պարենային ապրանքների գների 5.2 տոկոսով աճի արդյունք էր: Այս ապրանքախմբի կազմում դեկտեմբերի նկատմամբ առավել թանկացան բանջարեղենն ու կարտոֆիլը՝ 35.3 տոկոսով, միրգը՝ 24.1 տոկոսով, ձկնամթերքը՝ 10.3 տոկոսով և ձուն՝ 4.6 տոկոսով:

Ոչ պարենային ապրանքների գների մակարդակը, ընդհանուր առմամբ, անփոփոխ էր: Այնուամենայնիվ դեկտեմբերի համեմատ 10.7 տոկոսով թանկացան ոսկերչական իրերն: Միևնույն ժամանակ անձնական օգտագործման մեքենաների և բենզինի գծով արձանագրվեց 2.6 տոկոս գնանկում:

Ծառայությունների գներն աճեցին 0.1 տոկոսով, որոնց կազմում 2.2 տոկոսով թանկացան կոշիկի վերանորոգման, 1.8 տոկոսով՝ հեռախոսի (հեռագրի), 1.4 տոկոսով՝ ներքաղաքային տրանսպորտի ծառայությունները: Միևնույն ժամանակ գնանկում էր արձանագրվել մշակութային և միջքաղաքային տրանսպորտի ծառայությունների գծով՝ 5.0 և 0.4 տոկոսով համապատասխանաբար:

2005 թվականի հունվար-դեկտեմբերին ՀՆԱ-ի դեֆլյատորը կազմեց 3.1 տոկոս: Առավել բարձր էր շինարարության ճյուղի դեֆլյատորը՝ 21.3 տոկոս: Նախորդ տարվա համեմատ գնանկում էր գյուղատնտեսության, ինչպես նաև տրանսպորտ (և կապ) ճյուղերում՝ 12.3 և 2.4 տոկոս համապատասխանաբար:

Հիմնական բյուջետային ցուցանիշներ

միլիարդ դրամ, ըստ ֆինանսավորման

	2002	2003	2004	2005
Պետբյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	228.0	250.1	297.9	372.9
տարեկան ցուցանիշներ				
Ընդամենը եկամուտներ	211.3	240.2	288.2	363.1
Ընթացիկ եկամուտներ	209.5	237.0	279.1	350.7
Հարկային եկամուտներ, այդ թվում	185.4	212.2	250.1	304.3
Ավելացված արժեքի հարկ	95.0	107.8	117.9	146.8
Շահութահարկ	17.4	17.6	32.0	46.6
Եկամտահարկ	12.5	16.8	20.4	26.6
Ակցիզային հարկ	35.3	39.1	40.7	38.6
Պետական տուրք	13.2	15.2	16.9	17.3
Ոչ հարկային եկամուտներ	10.9	9.5	12.0	29.2
Կապիտալ եկամուտներ	1.8	3.2	9.1	12.4
Պաշտոնական տրանսֆերտներ	16.7	9.9	9.7	9.8
Պետբյուջեի ծախսեր	235.8	242.0	295.9	395.2
Պաշտպանություն	36.8	44.3	52.5	64.4
Հասարակական կարգի պահպանություն	15.9	19.9	23.2	33.3
Կրթություն և գիտություն	29.1	32.9	45.2	58.8
Առողջապահություն	14.8	18.9	24.3	30.4
Սոց. ապահովագրություն և ապահովություն	23.8	29.3	35.3	44.1
Ընթացիկ ծախսեր	210.4	214.5	252.8	310.1
Աշխատավարձ	20.9	13.9	24.3	33.2
Տոկոսավճարներ	15.7	11.3	9.8	9.9
Սուբսիդիաներ	8.2	15.1	18.4	16.5
Ընթացիկ տրանսֆերտներ	47.8	43.9	60.1	76.6
Ապրանքներ և ծառայություններ	117.8	130.3	140.1	173.8
Կապիտալ ծախսեր	13.6	21.6	32.7	71.9
Վարկավորում հանած մարում	11.8	5.8	10.5	13.2
Դեֆիցիտի ֆինանսավորում	7.8	-8.1	-2.0	22.2

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ, ըստ ֆինանսավորման

	2002	2003	2004	2005
տարեկան ցուցանիշներ				
Հարկային եկամուտներ, այդ թվում	13.6	13.1	13.2	13.7
Ավելացված արժեքի հարկ	7.0	6.6	6.2	6.6
Շահութահարկ	1.3	1.1	1.7	2.1
Եկամտահարկ	0.9	1.0	1.1	1.2
Ակցիզային հարկ	2.6	2.4	2.1	1.7
Պաշտոնական տրանսֆերտներ	1.2	0.6	0.5	0.4
Ընդամենը պետբյուջեի ծախսեր, այդ թվում	17.3	14.9	15.6	17.7
Պաշտպանություն	2.7	2.7	2.8	2.9
Հասարակական կարգի պահպանություն	1.2	1.2	1.2	1.5
Կրթություն և գիտություն	2.1	2.0	2.4	2.6
Առողջապահություն	1.1	1.2	1.3	1.4
Սոց. ապահովագրություն և ապահովություն	1.8	1.8	1.9	2.0
Դեֆիցիտի ֆինանսավորում	0.6	0.5	0.1	1.0

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ: